Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
փետրվարի 19-ի N - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ՝ «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգը կիրառվում է ֆիզիկական անձի իրականացրած գործարքն «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքի մատակարարում համարվելու դեպքերում։

2. Ֆիզիկական անձի իրականացրած՝ օրենքի համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքների մասով ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը որոշվում է օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան։

3. Ավելացված արժեքի հարկի գումարը որոշվում է՝ ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության նկատմամբ կիրառելով հարկի 20 տոկոս դրույքաչափ (լրիվ արժեքով հատուցման գումարի նկատմամբ՝ 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով)։

4. Ֆիզիկական անձի իրականացրած՝ օրենքի համաձայն ապրանքի մատակարարում համարվող գործարքի մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա է հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարի և այդ գործարքի իրականացման համար գույքի ձեռքբերման մասով մատակարարի հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարի դրական տարբերությունը։ Ապրանքի մատակարարում համարվող այն

գործարքի մասով, որն իրականացրած ֆիզիկական անձի նկատմամբ կիրառելի է ավելացված արժեքի հարկի շեմը, և որի իրականացմամբ այդ շեմը գերազանցվել է, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա է շեմը գերազանցող գումարի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարի և այդ գույքի ձեռքբերման մասով մատակարարի հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարի այն մասի դրական տարբերությունը, որը համապատասխանում է գործարքի հարկվող շրջանառության մեջ դրա այն գումարի տեսակարար կշռին, որով գերազանցվել է ավելացված արժեքի հարկի շեմը: Շեմի գերազանցումից հետո իրականացված գործարքների մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա է հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարի և այդ գործարքի իրականացման համար գույքի ձեռքբերման մասով մատակարարի հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարի դրական տարբերությունը:

5. Գույքի ձեռքբերման մասով մատակարարի հարկային հաշիվներում առանձնաց-ված ավելացված արժեքի հարկի գումարը կամ դրա մասը նվազեցվում է հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարից, եթե ֆիզիկական անձն ավելացված արժեքի հարկի հաշվարկի հետ, օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան, հարկային մարմին է ներկայացնում գույքի ձեռքբերման մասով ստացված հարկային հաշվի (հաշիվների) մասին տեղեկություններ:

6. Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) ունեցող ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ ապրանքի մատակարարում համարվող գործարքի գծով հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում ֆիզիկական անձը, օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան,

հարկային մարմին է ներկայացնում իր կողմից դուրս գրված հարկային հաշիվների մասին տեղեկություն։

7. Ֆիզիկական անձն ապրանքի մատակարարում համարվող գործարքի մասով, մինչև գործարքի իրականացման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, իր բնակության (հաշվառման) վայրի հարկային տեսչություն է ներկայացնում ավելացված արժեքի հարկի հաշվարկ՝ համաձայն սահմանված ձևի։

8. Ապրանքի մատակարարում համարվող գործարքներն օրենքով կամ միջազգային պայմանագրով՝ ավելացված արժեքի հարկով չհարկվելու (հարկից ազատվելու, հարկման օբյեկտ չհանդիսանալու կամ ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափ կիրառվելու) դեպքերում ֆիզիկական անձն այդ գործարքի մասով ավելացված արժեքի հարկը չի վճարում, սակայն պարտավոր է ներկայացնել ավելացված արժեքի հարկի հաշվարկ՝ համաձայն սահմանված ձևի։

9. Ֆիզիկական անձը ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկում սխալներ ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է ներկայացնել ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկ։

10. Ֆիզիկական անձն ապրանքի մատակարարում համարվող գործարքի մասով ավելացված արժեքի հարկի գումարը վճարում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև գործարքի իրականացման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ։ Վճարումը կատարվում է ավելացված արժեքի հարկի համապատասխան գանձապետական հաշվին։

11. Ֆիզիկական անձը վճարում կատարելու համար ավելացված արժեքի հարկի համապատասխան գանձապետական հաշվի համարը պարզում է իր բնակության վայրի հարկային տեսչությունից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Ֆիզիկական անձի կողմից (համապատասխան վանդակում նշել «X»)				Փաստաթղթի հերթական համարը _____ _____ (ամսաթիվը, ամիսը, տարեթիվը) (լրացվում է հարկային մարմնի կողմից)
գործարքի իրականացման ժամանակաշրջանը		հաշվարկի ճշգրտման ժամանակաշրջանը		
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (լրացվում է ՀՎՀՀ-ի առկայության դեպքում)				
2. Գործարքի իրականացման (ճշգրտման) ժամանակաշրջանը				տարի ☐☐☐☐ եռամսյակ ☐
3. Ֆիզիկական անձի անունը, ազգանունը				
4. Սոցիալական քարտի համարը				☐☐☐☐☐☐☐☐☐☐
5. Գտնվելու (բնակության) վայրը				
6. Տան հեռախոսի համարը				

	Ա. Հարկվող շրջանառությունը	Բ. Ավելացված արժեքի հարկի գումարը (դրամ)
7. Ապրանքի մատակարարում համարվող գործարքի (գործարքների)		
8. ԱԱՀ-ով չհարկվող (ԱԱՀ-ից ազատված, հարկման օբյեկտ չհանդիսացող, ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող)		X
9. Գույքի ձեռքբերման համար վճարված	X	
10. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա գումարը (7Բ - 9Բ, «0» կամ բացասական թվի դեպքում լրացնել «0»)		

Ֆիզիկական անձի ստորագրությունը, անունը, ազգանունը _____

_____

_____ _____ 20 թ.

09_0199